



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան

03.12.2021թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ

ՔՆՆՈՂ ԱՆՁԻ

թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2021/104

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Լ. Անանիկյանի

Պատվիրատու՝ ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմ

Բողոք բերող՝ «Իմպեքս» ՍՊԸ

Գործով ներգրավված երրորդ կողմ՝ ՀՀ ֆինանսների նախարարություն

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝

«ՀՀ ԱԺ ԷԱՃԱՊՁԲ-21/14» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ընթացակարգ,
տեսահսկման համակարգի ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ նաև՝ Բողոքներ
քննող անձ), քննության առնելով «Իմպեքս» ՍՊԸ-ի (այսուհետ նաև՝ Ընկերություն) կողմից
11.11.2021թ.-ին ներկայացրած բողոքը (այսուհետ նաև՝ Բողոք) և կից փաստաթղթերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի նախապատմությունը.

Դիմելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ Ընկերությունը
ներկայացրած բողոքով խնդրել է պարտավորեցնել «ՀՀ ԱԺ ԷԱՃԱՊՁԲ-21/14» ծածկագրով

էլեկտրոնային աճուրդի գնահատող հանձնաժողովին և Պատվիրատուին կատարելու «Տեխնիկական բնութագիր - գնման ժամանակացույց»-ում օրենսդրությանը համապատասխան փոփոխությունները, իսկ վերջինիս անհնարինության դեպքում չկայացած հայտարարել Մրցույթը:

Բողոքներ քննող անձին բողոքը մակագրվել է 09.11.2021թ.-ին:

Բողոքներ քննող անձի 11.11.2021թ.-ի թիվ /ԲԲԱ-ԼՕ/1/18451-2021 գրությամբ բողոքը վերադարձվել է բողոքում առկա թերությունները վերացնելու համար:

Ընկերությունը 11.11.2021թ.-ին ներկայացրել է բողոքի շտկված տարբերակը:

12.11.2021թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակված հայտարարությամբ բողոքը ընդունվել է վարույթ, տրվել է թիվ ԳԲԲԱ-ԼՕ-2021/104 համարի ծածկագիրը:

18.11.2021թ.-ին ներկայացված միջնորդությամբ Ընկերությունը հրաժարվել է ներկայացրած բողոքից:

23.11.2021թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակված հայտարարությամբ, Բողոքներ քննող անձը, հաշվի առնելով վերոնշյալ միջնորդությունը և հիմք ընդունելով ՀՀ ֆինանսների նախարարի 06.12.2018թ.-ի թիվ 600-Ն հրամանով հաստատված «Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի գործունեության» մասին կարգի 22-րդ կետի դրույթները, որոշել է թիվ ԳԲԲԱ-ԼՕ-2021/104 բողոքը համարել որպես ՀՀ ֆինանսների նախարարության կողմից նախաձեռնված բողոքարկման ընթացակարգ և վերջինիս ներգրավվել գործով որպես երրորդ կողմ:

Բողոքներ քննող անձի 23.11.2021թ.-ի թիվ Ն/ԲԲԱ-ԼՕ/1/28977-21 գրությամբ՝ բողոքարկման ընթացակարգում որպես կողմ է ներգրավվել ՀՀ ֆինանսների նախարարությունը:

18.11.2021թ.-ին և 03.12.2021թ.-ին նշանակվել և հրավիրվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 18.11.2021թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 03.12.2021թ.-ին:

2. «Իմպեքս» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«Իմպեքս» ՍՊԸ-ն 11.11.2021թ.-ին ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

«ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի (այսուհետ՝ Պատվիրատու) կարիքների համար սույն թվականի նոյեմբերի 2-ին ՀՀ ԱԺ ԷԱԾԱՊՁԲ-21/14 ծածկագրով տեսահսկման համակարգի ձեռքբերման նպատակով կազմակերպվել է էլեկտրոնային աճուրդ (այսուհետ՝ Մրցույթ): Մրցույթին մասնակցելու հայտ է ցանկանում ներկայացրել նաև մեր

կազմակերպությունը՝ «Իմպեքս» ՍՊԸ-ն (այսուհետ՝ Կազմակերպություն): Մրցույթի բացման ժամկետ է սահմանվել 09.11.2021 թ ժամը 14:30: «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 50-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ ենթակետով սահմանում է, որ «Եթե բողոքը ներկայացրած անձը բողոքարկում է գնման առարկայի բնութագրերը, նախատրակավորման հայտարարության կամ հրավերի պահանջները, ապա բողոքը ներկայացվում է մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը»: Օրենքի 13-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով սահմանում է, որ «Գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով փարակերպ մեկնաբանությունը: Գնման առարկայի բնութագրերը, որոնք ներառում են նաև պայմանագրի գինը, ընդգրկվում են պայմանագրում: Գնման առարկայի բնութագրերը՝ պետք է մրցակցության հավասար պայմաններ ապահովեն հնարավոր մասնակիցների համար, չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը, պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է փվյալ գնումը, ներառում են գնման առարկայի մասնագրի, տեխնիկական փվյալների, իսկ աշխատանքների դեպքում՝ նաև աշխատանքների ծավալաթերթի, ժամանակացույցի և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը»: Տվյալ դեպքում Պատվիրատուն, Մրցույթի հրավերում որպես բնութագիր 2 ապրանքների մասով սահմանել է.

Տեսաձայնագրիչ 3532H8-A1, 3332B8-A1

Նվազագույնը 32 IP տեսախցիկի միացման հնարավորությամբ,

Մուտքային ք/ն՝ նվազագույնը 256 ՄԲ/վ,

Ելքային ք/ն՝ նվազագույնը 160 ՄԲ/վ,

Վիդեո/Աուդիո ելքը՝ HDMI1: 4K (3840 × 2160)/30Hz, 2K (2560 × 1440)/60Hz, 1920 × 1080/60Hz, 1600 × 1200/60Hz, 1280 × 1024/60Hz, 1280 × 720/60Hz, 1024 × 768/60Hz
HDMI2: 1920 × 1080/60Hz, 1280 × 1024/60Hz, 1280 × 720/60Hz, 1024 × 768/60Hz,

VGA1: 2K (2560 × 1440)/60Hz, 1920 × 1080/60Hz, 1600 × 1200/60Hz, 1280 × 1024/60Hz, 1280 × 720/60Hz, 1024 × 768/60Hz
VGA2: 1920 × 1080/60Hz, 1280 × 1024/60Hz, 1280 × 720/60Hz, 1024 × 768/60Hz

Դեկոդինգը՝ նվազագույնը H.265/ H.265+/H.264/H.264+/MPEG4,

Ձայանգրման թույլտվությունը՝ նվազագույնը 8ՄՊ,

Արարողակարգերը (պրոտոկոլները) TCP/IP, DHCP, HIK Cloud P2P, DNS, DDNS, NTP, SADP, SMTP, NFS, iSCSI, UPnP™, HTTPS,

Նվազագույնը 8 կոշտ սկավառակի տեղադրման հնարավորությամբ, յուրաքանչյուրի նվազագույն ծավալը 6SP

Երկկողմանի աուդիոյի հնարավորություն՝ 1-ch, RCA (2.0 Նր-բ, 1 կՁ),

Ցանցը՝ 2 RJ-45 10/100/1000 ՄԲ/Վ ինքնակարգավորվող Ethernet ինտերֆեյս,

Սերիական ինտերֆեյսը՝ RS-232; RS-485,

Տազնապի մուտք/ելք՝ նվազագույնը 16/4,

Հոսանքի սպառումը՝ 100-ից 240 VAC, 50-ից 60 Hz,

Աշխատանքային ջերմաստիճանը՝ -10 °C-ից 55 °C,

Քաշը՝ առավելագույնը 8կգ,

HIKVISION DS-8632NI-K8 կամ համարժեք – 4 հատ:

Արտաքին տեսախցիկ 9442E3

Կետայնություն - նվազագույնը 1/3", առաջադեմ սկան, 4.0 մս, CMOS կամ համարժեք:

Լուսավորությունը՝ առավելագույնը 0.003 Lux @ (F1.4, AGC ON), B/W: 0 Lux IR-ով

Ոսպնյակ – առնվազն 2.8~12մմ F1.4,

Ոսպնյակի բացվածք (H) – առնվազն 108° ~ 30°,

Ոսպնյակի բացվածք (V) - առնվազն 56°~17°,

Ոսպնյակի բացվածք (O) - առնվազն 131°~35°,

Նվազագույն լուսավորություն - Գույն առվելագույնը՝ 0.005 լյուքս (F1.4, AGC ON); 0 Լյուքս IR- ի հետ,

Ցերեկ/ գիշեր - IR-cut ֆիլտր Ավտոմատ անջատիչ (ICR),

Թվային աղմուկի իջեցում - 2D/3D DNR,

IR միջակայք – մինչև առնվազն՝ 60մ,

Defog, Digital Defog, WDR - առնվազն՝ 120ԴԲ,

Կետայնությունը՝ նվազագույնը 2688 × 1520,

Տեսանյութերի սեղմում - H.265/H.264/H.265+/H.264+

կադրի միջակայք - առնվազն՝ Main Stream: 50 Hz: 25 fps (2688 × 1520, 1920 × 1080, 1280 × 720) 60 Hz: 30 fps (2688 × 1520, 1920 × 1080, 1280 × 720); Sub Stream: 50 Hz: 25 fps (640 × 480, 640 × 360) 60 Hz: 30 fps (640 × 480, 640 × 360); Third Stream: 50 Hz: 10 fps (1920 × 1080, 1280 × 720, 640 × 480, 640 × 360) 60 Hz: 10 fps (1920 × 1080, 1280 × 720, 640 × 480, 640 × 360):

Վիդեո բ/ն՝ նվազագույնը 32 ԿԲ/վ-ից 8ՄԲ/վ,

Աուդիո Բ/Ռ՝ 64 Kbps (G.711ulaw/G.711alaw)/16 Kbps (G.722.1)/16 Kbps (G.726)/32 to 192 Kbps (MP2L2)/8 to 320 Kbps (MP3)/16 to 64 Kbps (AAC):

Արարաողակարգեր (պրոտոկոլներ) TCP/IP, ICMP, HTTP, HTTPS, FTP, DHCP, DNS, DDNS, RTP, RTSP, NTP, UPnP, SMTP, IGMP, 802.1X, QoS, IPv4, IPv6, UDP, Bonjour, SSL/TLS, PPPoE, SNMP, ARP, Open Network Video Interface (PROFILE S, PROFILE G, PROFILE T), ISAPI, SDK:

Micro SD/SDHC/SDXC հնարավորությամբ՝ նվազագույնը 256 ԳԲ հիշողությամբ
SNR՝ նվազագույնը 52ԴԲ, Գիշեր/ցերեկ ավտոմատ անցում, BLC, HLC, 3D DNR

Պատկերի կարգավորումները՝ Rotate mode, saturation, brightness, contrast, sharpness, gain, white balance adjustable by client software or web browser

Տազնապի նվազագույնը 1 մուտք և 1 ելքի հնարավորությամբ

Իրադարձությունների ճանաչում, մասնավորապես մարդկանց և մեքենաների տարբերակում, սցենարի փոփոխության հայտնաբերում, դեմքի որսում, սահմանի գծի հայտնաբերում:

Աշխատանքային ջերմաստիճանը՝ -30 °C-ից 60 °C,

Պաշտպանվածություն՝ նվազագույնը IP66, IK10: HIKVISION DS-2CD2646G2-IZS կամ համարժեք – 52 հաբ:

Մասնավորապես բնութագրում նշված «Արարողակարգերը (պրոտոկոլները) TCP/IP, DHCP, HIK Cloud P2P, DNS, DDNS, NTP, SADP, SMTP, NFS, iSCSI, UPnP™, HTTPS», «Ոսպնյակի բացվածք (H) - առնվազն 108° ~ 30°» և «Ոսպնյակի բացվածք (O) - առնվազն 131°~35°» դաշտերում գրված համապատասխանաբար «HIK Cloud P2P», «108°» և «131°» կետերը պարունակում են խտրական կետեր՝ մասնավորապես բնութագրերը բառացիորեն արտադրված են Hikvision ապրանքային նշանի մոդելի տեխնիկական անձնագրից, կոնկրետ մոդելը նույնպես նշված է բոլոր ապրանքների մեջ: Ձեր ուշադրությունն ենք հրավիրում այն փաստին, որ շատ այլ արտադրողներ ունեն հիմնական պահանջներին բավարարող բոլոր որակական և տեխնիկական հատկանիշները, սակայն այս խտրական բնութագրով սահմանափակվում է այլ ապրանքային նշանի մասնակցությունը մրցույթին:»:

Ելնելով վերոգրյալներից՝ Ընկերությունը Բողոքներ քննող անձին խնդրել է պարտավորեցնել «ՀՀ ԱԺ ԷԱՃԱՊՁԲ-21/14» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի գնահատող հանձնաժողովին և Պատվիրատուին կատարելու «Տեխնիկական բնութագիր - գնման ժամանակացույց»-ում օրենսդրությանը համապատասխան փոփոխությունները, իսկ վերջինիս անհնարինության դեպքում չկայացած հայտարարել Մրցույթը:

3. ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստարկները, հիմնավորումները և դիրքորոշումը.

Բողոքներ քննող անձը 12.11.2021թ.-ին թիվ /ԲԲԱ-ԼՕ/2/18530-2021 գրությամբ դիմել է ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմին (այսուհետ նաև՝ Պատվիրատու), հնարավորություն տալով «Իմպեքս» ՍՊԸ-ի կողմից 11.11.2021թ.-ին ներկայացված բողոքի վերաբերյալ ներկայացնել անհրաժեշտ բոլոր փաստաթղթերի պատճեններն ու Պատվիրատուի գրավոր կարծիքը:

Պատվիրատուն, ստանալով գրավոր դիրքորոշում հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, չի ներկայացել հրավիրված նիստերին:

Պատվիրատուն, 16.11.2021թ.-ին գրությամբ ներկայացված դիրքորոշմամբ, հայտնել է հետևյալը.

«ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմը (այսուհետ՝ Պատվիրատու) տեսահսկման համակարգի ձեռքբերման նպատակով հայտարարել է ՀՀ ԱԺ ԷԱՃԱՊՁԲ-21/14 ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ընթացակարգ (այսուհետ՝ Ընթացակարգ), որի հայտարարությունը և հրավերը տեղեկագրում հրապարակվել է 02.11.2021 թվականին:

«Գնումների մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) 3-րդ հոդվածի համաձայն՝

1. Սույն օրենքի նպատակն է ապահովել գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեք, այն է՝

1) պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերում՝ համարժեք հատուցմամբ.

2) գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացում:

2. Գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Գնումների օրենսդրությունը, հիմնվելով գնման գործընթացի մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային, ոչ խտրական, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարության սկզբունքների վրա, նպատակ է հետապնդում ապահովելու գնումների գործընթացում հարուցման դիմաց Պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերումը՝ համարժեք հարուցմամբ, և որ ամենակարևորն է՝ գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացման ապահովումը:

Օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով փարակերպ մեկնաբանությունը: Գնման առարկայի բնութագրերը, որոնք ներառում են նաև պայմանագրի գինը, ընդգրկվում են պայմանագրում:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնման առարկայի բնութագրերը՝

1) պետք է մրցակցության հավասար պայմաններ ապահովեն հնարավոր մասնակիցների համար.

2) չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը.

3) պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը.

4) ներառում են գնման առարկայի մասնագրի, տեխնիկական տվյալների, իսկ աշխատանքների դեպքում՝ նաև աշխատանքների ծավալաթերթի, ժամանակացույցի և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը:

Տվյալ դեպքում Հրավերում ներառված գնման առարկայի տեխնիկական բնութագրում առկա չէ այնպիսի պահանջ, որը հակասում է գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջներին: Պատվիրատուն Ընթացակարգի հրավերի Հավելված 1-ով՝ տեխնիկական-բնութագիր գնման ժամանակացույցով, ապրանքների տեխնիկական բնութագիրը սահմանելիս նախատեսել է իր կարիքին համապատասխան գնման առարկայի տեխնիկական պահանջ, և վերջինիս գործողություններն ուղղված են եղել Օրենքի 3-րդ հոդվածով սահմանված նպատակների իրագործմանը և դրա արդյունքում որևէ կերպ չեն խախտվել գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջները:

Օրենքի 13-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ գնման առարկայի հատկանիշները չպետք է պահանջ կամ հղում պարունակեն որևէ առևտրային նշանի, ֆիրմային

անվանմանը, արտոնագրին, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ արքյուրին կամ արտադրողին, բացառությամբ այն դեպքերի, երբ անհնար է գնման առարկայի բնութագրումն առանց դրանց: Հղումներ օգտագործելու դեպքում հատկանիշների բնութագիրը պետք է պարունակի «կամ համարժեք» բառերը:

Ընթացակարգի Հրավերի Հավելված 1-ը՝ տեխնիկական-բնութագիր գնման ժամանակացույցը, չի հակասում վերոնշյալ դրույթի պահանջներին:

Ցանկացած հնարավոր մասնակից կարող է բարձրացնել նմանատիպ հարց՝ հայտարարելով, որ Հրավերի պահանջները՝ մասնավորապես տեխնիկական բնութագիրը դիտարկվում է խտրական:

Այսպես՝ ՀՀ կառավարության 04.05.2017թ. 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու՝ Կարգ) 32-րդ կետի 25-րդ ենթակետի համաձայն՝ յուրաքանչյուր ոք իրավունք ունի մինչև հրավերում փոփոխությունների կատարման համար սահմանված վերջնաժամկետը լրանալը, էլեկտրոնային փոստի միջոցով գնահատող հանձնաժողովի քարտուղարին ներկայացնել հիմնավորումներ հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից՝ առանց նշելու անունը-ազգանունը: Ներկայացված հիմնավորումներն ընդունելի համարվելու դեպքում գնահատող հանձնաժողովը սահմանված ժամկետում դրանցով պայմանավորված փոփոխություններ է կատարում հրավերում:

Կարգի 43-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ հայտերի բացման և գնահատման նիստի ավարտից հետո ոչ ուշ, քան հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը՝

1) հայտերի բացման և գնահատման նիստի արձանագրության բնօրինակից արտատրված (սկանավորված) տարբերակը և սույն կարգի 32-րդ կետի 25-րդ ենթակետի հիման վրա ստացված հիմնավորումների քննարկման ամփոփաթեթը, որը պարունակում է տեղեկություններ նաև հիմնավորումները ստանալու ամսաթվի և էլեկտրոնային փոստի հասցեների վերաբերյալ, հրապարակում է տեղեկագրում: Եթե հիմնավորումներ չեն ներկայացվել, ապա հանձնաժողովի նիստի արձանագրության մեջ դրա մասին կատարվում են համապատասխան նշումներ:

Օրենքի 40-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ մասնակիցն իրավունք ունի հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուց առնվազն երեք օրացուցային օր առաջ պահանջելու հրավերի պարզաբանում: Հարցումը կատարած մասնակցին պարզաբանումը

տրամադրվում է հարցումն ստանալու օրվան հաջորդող երկու օրացուցային օրվա ընթացքում:

Նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուց ոչ ուշ, քան երկու օրացուցային օր առաջ հրավերում կարող են կատարվել փոփոխություններ, որոնք նույն օրը հրապարակվում են տեղեկագրում: Այդ դեպքում հայտերի ներկայացման վերջնաժամկետը հաշվարկվում է այդ փոփոխությունների մասին տեղեկագրում հրապարակելու օրից:

Հարկ ենք համարում նշել, որ «Իմպեքս» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Բողոքաբեր) Ընթացակարգին առնչվող ոչ մի հարցում չի ներկայացրել:

Կարգի 22-րդ կետի համաձայն՝ գնման առարկայի բնութագրերը և մասնակիցների որակավորման հատկանիշների գնահատմանը ներկայացվող չափանիշները սահմանելիս պետք է հաշվի առնել, որ դրանց պետք է բավարարեն մեկից ավելի հնարավոր մասնակիցներ և արտադրողներ՝ (...):

Բողոքաբերը, որպես ապացույց, ոչ մի փաստական և իրավական հիմքեր չի ներկայացրել, որով խտրական կոդիվեր Ընթացակարգի Հրավերի Հավելված 1-ով՝ տեխնիկական-բնութագիր գնման ժամանակացույցով տեխնիկական բնութագիրը:

Բողոքաբերը բողոքարկել է գնման առարկայի բնութագիրը, բողոքի վեճի առարկան հանդիսացել է Հրավերում առկա որևէ պայմանի՝ գնումների օրենսդրությանը հակասելու հանգամանքը, մինչդեռ Պատվիրատուն գնման առարկայի բնութագիրը սահմանելիս հաշվի է առել Կարգի 22-րդ կետի պահանջները՝ դրանց պետք է բավարարեն մեկից ավելի հնարավոր մասնակիցներ և արտադրողներ: Տվյալ դեպքում Ընթացակարգին հայտ են ներկայացրել թվով 2 մասնակից:

Պատվիրատուն թույլ չի տվել Օրենքի 13-րդ հոդվածով սահմանված դրույթների խախտում՝ հնարավոր մասնակիցների մրցակցության հավասար պայմանների խոչընդոտման առումով, և Ընթացակարգի Հրավերի Հավելված 1-ով նախատեսված՝ տեխնիկական բնութագիրը կազմված է և համապատասխանում է Օրենքի 13-րդ հոդվածի և Կարգի 22-րդ կետի դրույթներին, սահմանված տեխնիկական բնութագրում առկա չափորոշիչները չեն խոչընդոտել հնարավոր մասնակիցների մրցակցության հավասար պայմաններ ունենալու հանգամանքը:

Կարգի 21-րդ կետի 1-ին ենթակետի «ը» պարբերության համաձայն՝ եթե գնման գործընթացների կազմակերպման ժամանակացույցով այլ ժամկետ նախատեսված չէ, ապա գնման պահանջի ծագման օրվան հաջորդող քսան աշխատանքային օրվա ընթացքում պատասխանատու ստորաբաժանումը՝

- 1) կազմում և հաստատում է գնման հայտը, որը ներառում է՝
- 2) (...)

ը. կնքվելիք պայմանագրով ապրանքի մատակարարման, աշխատանքի կատարման կամ ծառայության մատուցման ժամկետը, իսկ փուլային ձևով պայմանագրի կատարման դեպքում՝ առաջին փուլի ժամկետը, որը չպետք է պակաս լինի 20 օրացուցային օրից: Ընդ որում, սույն պարբերությամբ սահմանված ժամկետի հաշվարկը կատարվում է պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրվանից:

Բողոքաբերի չհիմնավորված և բողոքի բավարարմանն ուղղված էական նշանակության ապացույցների բացակայությամբ պայմանավորված, պայմանագրի կատարման ժամկետների առումով կարող են խախտվել նաև մյուս մասնակիցների իրավունքները:

Հիմք ընդունելով Օրենքի 51-րդ հոդվածի 2-րդ մասը՝ խնդրում ենք Ընթացակարգը հանել կասեցումից և թույլ տալ շարունակել գնման գործընթացը՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ սույն Ընթացակարգով ձեռք բերվող ապրանքը Պատվիրատուի համար ժամկետի և ֆունկցիոնալ առումներով հանդիսանում է կարևոր գնում:»:

4. Բողոքարկման ընթացակարգի կողմ՝ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված դիրքորոշումը.

Ներկայացված բողոքի քննության ընթացքում, 18.11.2021թ.-ին ներկայացված միջնորդությամբ Ընկերությունը հրաժարվել է ներկայացրած բողոքից:

23.11.2021թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակված հայտարարությամբ, Բողոքներ քննող անձը, հաշվի առնելով վերոնշյալ միջնորդությունը և հիմք ընդունելով ՀՀ ֆինանսների նախարարի 06.12.2018թ.-ի թիվ 600-Ն հրամանով հաստատված «Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի գործունեության» մասին կարգի 22-րդ կետի դրույթները, որոշել է թիվ ԳԲԲԱ-ԼՕ-2021/104 բողոքը համարել որպես ՀՀ ֆինանսների նախարարության կողմից նախաձեռնված բողոքարկման ընթացակարգ և վերջինիս ներգրավվել գործով որպես երրորդ կողմ: Բողոքներ քննող անձի 23.11.2021թ.-ի թիվ Ն/ԲԲԱ-ԼՕ/1/28977-21 գրությամբ՝ բողոքարկման ընթացակարգում որպես կողմ է ներգրավվել ՀՀ ֆինանսների նախարարությունը (այսուհետ նաև՝ Նախարարություն):

Նախարարությունը, լինելով պատշաճ ծանուցված կայանալիք նիստի տեղի, օրվա և ժամի մասին, չի ներկայացել հրավիրված նիստերին՝ չներկայացնելով գրավոր դիրքորոշում:

5. ԳԲԲԱ-ԼՕ-2021/104 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի կողմից տեսահսկման համակարգի ձեռքբերման նպատակով 02.11.2021թ.-ին հայտարարվել է «ՀՀ ԱԺ ԷԱՃԱՊՁԲ-21/14» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ կամ Աճուրդ):

ii. Ընթացակարգի հրավերի հավելված 6-ով՝ պետության կարիքների համար ապրանքի մատակարարման պայմանագրի հավելված 1-ով՝ տեխնիկական բնութագիր - գնման ժամանակացույցով (այսուհետ նաև՝ Հավելված 1) նախատեսված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձայն՝ սահմանվել է հետևյալ տեխնիկական բնութագիրը՝

Ապրանքի			
Հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	Գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	Ամբողջական անվանումը	Տեխնիկական բնութագիրը
1	32321200/2	տեսահսկողության համակարգ/տեսահսկման համակարգ/	Տեսաձայնագրիչ՝ Նվազագույնը 32 IP տեսախցիկի միացման հնարավորությամբ, Մուտքային ք/ո՝ նվազագույնը 256 ՄՔ/վ, Ելքային ք/ո՝ նվազագույնը 160 ՄՔ/վ, Վիդեո/Աուդիո ելքը՝ HDMI: 4K (3840 × 2160)/30Hz, 2K (2560 × 1440)/60Hz, 1920 × 1080/60Hz, 1600 × 1200/60Hz, 1280 × 1024/60Hz, 1280 × 720/60Hz, 1024 × 768/60Hz HDMI2: 1920 × 1080/60Hz, 1280 × 1024/60Hz, 1280 × 720/60Hz, 1024 × 768/60Hz, VGA1: 2K (2560 × 1440)/60Hz, 1920 × 1080/60Hz, 1600 × 1200/60Hz, 1280 × 1024/60Hz, 1280 × 720/60Hz, 1024 × 768/60Hz VGA2: 1920 × 1080/60Hz, 1280 × 1024/60Hz, 1280 × 720/60Hz, 1024 × 768/60Hz Դեկոդինգը՝ նվազագույնը H.265/H.265+/H.264/H.264+/MPEG4, Ձայնագրման թույլտվությունը՝ նվազագույնը 8ՄՊ, Արարողակարգերը (պրոտոկոլները) TCP/IP, DHCP, HIK Cloud P2P, DNS, DDNS, NTP, SADP, SMTP, NFS, iSCSI, UPnP™, HTTP, Նվազագույնը 8 կոշտ սկավառակի տեղադրման հնարավորությամբ, յուրաքանչյուրի նվազագույն ծավալը 6ՏԲ Երկկողմանի աուդիոյի հնարավորություն՝ 1-ch, RCA (2.0 Վր-ք, 1 կՁ), Ցանցը՝ 2 RJ-45 10/100/1000 ՄՔ/վ ինքնակարգավորվող Ethernet ինտերֆեյս, Սերիական

			<p>ինտերֆեյսը՝ RS-232; RS-485, Տազնապի մուտք/ելք՝ նվազագույնը 16/4, Հոսանքի սպառումը՝ 100-ից 240 VAC, 50-ից 60 Hz, Աշխատանքային ջերմաստիճանը՝ -10 °C-ից 55 °C, Քաշը՝ առավելագույնը 8կգ, HIKVISION DS-8632NI-K8 կամ համարժեք – 4 հար: Արտաքին տեսախցիկ Կերայնություն – նվազագույնը 1/3", առաջադեմ սկան,4.0 մպ, CMOS կամ համարժեք: Լուսավորությունը՝ առավելագույնը 0.003 Lux @ (F1.4, AGC ON), B/W: 0 Lux IR-ով Ոսպնյակ – առնվազն 2.8~12մմ F1.4, Ոսպնյակի բացվածք (H) – առնվազն 108° ~ 30°, Ոսպնյակի բացվածք (V) – առնվազն 56°~17°, Ոսպնյակի բացվածք (O) – առնվազն 131°~35°, Նվազագույն լուսավորություն – Գոյն առվելագույնը՝ 0.005 լյուքս (F1.4, AGC ON); 0 Լյուքս IR-ի հետ, Ցերեկ/ գիշեր - IR-cut ֆիլտր Ավտոմատ անջադիչ (ICR), Թվային աղմուկի իջեցում - 2D/3D DNR, IR միջակայք – մինչև առնվազն՝ 60մ, Defog, Digital Defog, WDR – առնվազն՝ 120ԴԲ, Կերայնությունը՝ նվազագույնը 2688 × 1520, Տեսանյութերի սեղմում – H.265/H.264/H.265+/H.264+ կարգի միջակայք – առնվազն՝ Main Stream:50 Hz: 25 fps (2688 × 1520, 1920 × 1080, 1280 × 720) 60 Hz: 30 fps (2688 × 1520, 1920 × 1080, 1280 × 720); Sub Stream: 50 Hz: 25 fps (640 × 480, 640 × 360) 60 Hz: 30 fps (640 × 480, 640 × 360); Third Stream: 50 Hz: 10 fps (1920 × 1080, 1280 × 720, 640 × 480, 640 × 360) 60 Hz: 10 fps (1920 × 1080, 1280 × 720, 640 × 480, 640 × 360): Վիդեո ք/ն՝ նվազագույնը 32 ԿԲ/վ-ից 8ՄԲ/վ, Աուդիո Բ/Ռ՝ 64 Kbps (G.711ulaw/G.711alaw)/16 Kbps (G.722.1)/16 Kbps (G.726)/32 to 192 Kbps (MP2L2)/8 to 320 Kbps (MP3)/16 to 64 Kbps (AAC): Արարողակարգեր (պրոտոկոլներ) TCP/IP, ICMP, HTTP, HTTPS, FTP, DHCP, DNS, DDNS, RTP, RTSP, NTP, UPnP, SMTP, IGMP, 802.1X, QoS, IPv4, IPv6, UDP, Bonjour, SSL/TLS, PPPoE, SNMP, ARP, Open Network Video Interface (PROFILE S, PROFILE G, PROFILE T), ISAPI, SDK: Micro SD/SDHC/SDXC հնարավորությամբ՝ նվազագույնը 256 ԳԲ հիշողությամբ SNR՝ նվազագույնը 52ԴԲ, Գիշեր/ցերեկ ավտոմատ անցում, BLC, HLC, 3D DNR Պարկերի կարգավորումները՝ Rotate mode, saturation, brightness, contrast, sharpness, gain, white balance adjustable by client software or web browser Տազնապի նվազագույնը 1 մուտք և 1 ելքի հնարավորությամբ Իրադարձությունների ճանաչում, մասնավորապես մարդկանց և մեքենաների փարբերակում, սցենարի փոփոխության հայտնաբերում, դեմքի որսում, սահմանի գծի հայտնաբերում: Աշխատանքային ջերմաստիճանը՝ -30 °C-ից 60 °C, Պաշտպանվածություն՝ նվազագույնը IP66, IK10: HIKVISION DS-2CD2646G2-IZS կամ համարժեք – 52 հար: Ներքին տեսախցիկ Կերայնություն – 1/3", առաջադեմ սկան,4.0 մպ, CMOS կամ համարժեք Լուսավորությունը՝ 0.01 Lux @ (F1.2, AGC ON), 0.018 Lux @ (F1.6, AGC ON), 0 Lux IR-ի հետ: Ոսպնյակ – առնվազն՝ 2,8մմ – 12 մմ F1.6, ավտոֆոկուս, Ոսպնյակի բացվածք (H) – առնվազն՝ 104°-ից 29°, Ոսպնյակի բացվածք (V) – առնվազն՝ 55°-ից 17°, Ոսպնյակի բացվածք (O) – առնվազն՝ 112.3 – ից 34°, Ցերեկ/ գիշեր - IR-cut ֆիլտր Ավտոմատ անջադիչ (ICR), Թվային աղմուկի իջեցում – 3D DNR, WDR՝ նվազագույնը 120ԴԲ, IR միջակայք – մինչև 30մ, Defog, Digital Defog, WDR – 120 ԴԲ, Վիդեո սեղմումը՝ Main stream: H.265/H.264 Sub-stream: H.265/H.264/MJPEG Third stream: H.265/H.264, Տեսանյութերի սեղմում – Ultra 265, H.265, H.264, MJPEG, Վիդեո ք/ն 32ԿԲ/վ-ից 16 ՄԲ/վ, Գծի հայտնաբերում, դեմքի հայտնաբերում, շարքի հայտնաբերում, Պարկերի կերայնությունը նվազագույնը՝ 2688 × 1520, Main Stream 50Hz:25fps (2688 × 1520, 2560 × 1440, 2304 × 1296, 1920 × 1080, 1280 × 720) 60Hz: 30fps (2688 × 1520, 2560 × 1440, 2304 × 1296, 1920 × 1080, 1280 × 720); Sub-Stream</p>
--	--	--	---

			<p>50Hz: 25fps (640 × 480, 640 × 360, 320 × 240) 60Hz: 30fps (640 × 480, 640 × 360, 320 × 240); Third Stream 50Hz: 25fps (1280 × 720, 640 × 360, 352 × 288) 60Hz: 30fps (1280 × 720, 640 × 360, 352 × 240) BLC/3D DNR/HLC, Micro SD/SDHC/SDXC-ի հնարավորությամբ՝ նվազագույնը 128 ԳԲ հիշողությամբ Արարատդակարգեր (պրոպրիոլներ) TCP/IP, UDP, ICMP, HTTP, HTTPS, FTP, DHCP, DNS, DDNS, RTP, RTSP, RTCP, PPPoE, NTP, UPnP, SMTP, SNMP, IGMP, 802.1X, QoS, IPv6, UDP, Bonjour, SSL/TLS, Հիմնական գործառնությունները՝ Anti-flicker, three streams, heartbeat, mirror, privacy masks, password reset via e-mail, pixel counter, HTTP listening, ONVIF (PROFILE S, PROFILE G, PROFILE T), ISAPI, SDK, 1 RJ45 10M/100M self-adaptive Ethernet port Աուդիո ք/ն՝ 64Kbps(G.711)/16Kbps(G.722.1)/16Kbps(G.726)/32-192Kbps(MP2L2)/8Kbps-320Kbps(MP3), Հոսանքը՝ 12 VDC ± 25%, terminal block PoE (802.3af, class 3) Աշխատանքային ջերմաստիճանը՝ -30 °C-ից +60 °C, Պաշտպանվածությունը՝ IP67, IK10: HIKVISION DS-2CD2743G1-I2S կամ համարժեք – 5 հար: Տեսախցիկ (համարներ ֆիքսող) Պարկերը նվազագույնը 1 / 2.8 CMOS Առաջադեմ սկան, Նվազագույն լուսավորությունը՝ Color: 0.001 2 AGC ON), Պարկերը որսալու արագությունը՝ նվազագույնը 1/50 վ-ից 1/100,000 վ, նվազագույնը 98% ճանաչման ճշգրտություն, 98%ընթացքի ուղղության հայտնաբերման ճշգրտություն, առավելագույնը 2% սխալվելու հնարավորություն Ոսպնյակի բացվածքը՝ 8մմ-ից 32մմ, ինֆրակարմիր ֆիլտրի և ավտոֆոկուսի աջակցությամբ: Տեսաձայնագրման սեղմումը՝ առնվազն Main stream: H.265/H.264/MJPEG; Sub-stream: H.265/H.264/MJPEG, Առավելագույն պարկերի թույլտվությունը՝ 1920x1200, Frame Rate 50fps (P) / 60fps (N), Պարկերի կարգավորումները՝ Հագեցվածությունը նվազագույնը 0-100, Պայծառությունը՝ նվազագույնը 0-100, կոնտրաստը՝ նվազագույնը 0-100, 3D DNR-ը՝ նորմալ, էքսպերտ և անջատված ռեժիմների ընտրության, հնարավորությամբ, սպիտակի բալանսի կարգավորմամբ, Smart ֆունկցիոնալությամբ՝ ANPR, vehicle type recognition, vehicle brand recognition, vehicle color recognition, լույսի և ժամի ինքնակարգավորմամբ Վիդեո սեղմումը՝ Main stream: H.265/H.264/MJPEG Sub-stream: H.265/H.264/MJPEG, «Աս» և «Սպիտակ» ցուցակներ առանձնացնելու հնարավորություն, մինչև 30,000 մեքենա գրանցելու հնարավորությամբ, SD/SDHC քարտի հնարավորություն նվազագույնը 128 ԳԲ տարողությամբ: Տեսախցիկը պետք է տարբերի մեքենաներին, այդ թվում բեռնատար, մարդատար մեքենաները, ավտոբուսները, հնչյառ նաև տարբերակի նվազագույնը հեղուկալ գույները՝ կարմիր, դեղին, կանաչ, կապույտ, շականագույն, սպիտակ, մոխրագույն, արծաթագույն, սև, նարնջագույն: Տեսախցիկը պետք է կարողանա նաև տարբերել նվազագույնը մեքենաների այն մակնիշները, որոնք նշված են ստորև. HYUNDAI, TOYOTA, KIA, HONDA, VOLKSWAGEN, BENZ, NISSAN, FORD, ISUZU, BMW, CHEVROLET, MITSUBISHI, RENAULT, OPEL, SUZUKI, SKODA, DAEWOO, AUDI, MAZDA, HINO, PEUGEOT, SSANG YONG, CITROEN, FIAT, SCANIA, MAN, VOLVO, LEXUS, SEAT, LAND ROVER DAIHATSU, UD TRUCKS, SUBARU, IVECO, MINI, JEEP, PORSCHE, CHERY, DODGE, CHRYSLER, ACURA, ALFA ROMEO, GREAT WALL, INFINITY, SMART, SAIC MAXUS, JAC, JAGUAR, JMC, LINCOLN, JMC, SAAB, FAW, YUTONG, LWE, JOYLONG, GEELY, CADILLAC, JINBEI, ANKAI, HAIMA, FOTON, KING LONG, DONGFENG, EMGRAND: Տեսախցիկը պետք է որսա մեքենան վերջինիս 5-120կմ/ժ ընթացքային արագության ժամանակ TCP/IP, HTTP, DHCP, DNS, RTP, RTSP, NTP,</p>
--	--	--	---

			<p>FTP picture upload, Heartbeat, password protection, NTP Պրոպոլոնների աջակցության առկայություն: Ինտերֆեյսը՝ նվազագույնը 1 RJ45 10M/100M/1000M adaptive Ethernet interface, 1 RS-485 serial port, 1 RS-232 serial port, 2 built- in LED lights, IR and white light switchable, 1 սուդիո մուտքի և 1 սուդիո ելքի հնարավորությամբ: Ահազանգման մուտքի և ելքի հնարավորությամբ՝ 3-ch triggered inputs, including 1-ch I/O triggered input and 2-ch alarm inputs, 2-ch relay outputs, supporting rising/falling/stopping of barrier gate boom pole: Աշխարանքային ջերմաստիճանը՝ նվազագույնը -30 °C-ից 70 °C , պետք է աշխարհի առավելագույնը 90% խոնավության պայմաններում, Հոսանքի սպառումը՝ 100- ից 240 VAC/12 V PoE, առավելագույնը 22W Պաշտպանության մակարդակը առնվազն IP67, IK10: HIKVISION iDS-TCM203-A կամ համարժեք – 2 հապ: Ցանցային տեսախցիկ Պարկերը՝ նվազագույնը 1/1.7 առաջադեմ սկան CMOS, Լուսավորությունը՝ առավելագույնը 0.009 Lux @ (F1.2, AGC ON), 0.012 Lux @ (F1.4, AGC ON), 0 Lux IR-ով, Պարկերի որսալու արագությունը՝ 1վ-ից 1/100000վ, Ոսպնյակը՝ 2.8~12mm @ F1.4, նվազագույնը 96.0°~32.6°, ավտոմատացված խոշորացումով, AF ինքնաշխատ ֆոկուսով, Ինֆրակարմիր հեռավորությունը (IR distance)՝ նվազագույնը 50մ, Գիշեր-ցերեկ ռեժիմի ավտոմատ միացմամբ, DWDR, Վիդեո սեղմումը՝ նվազագույնը H.264+/H.264/MJPEG, Վիդեո Բիթ Ռեյթը՝ նվազագույնը 32 կբ/վ – 16 Մբ/վ, Աուդիո սեղմումը՝ նվազագույնը G.711/G.722.1/G.726/MP2L2, Աուդիո Բիթ Ռեյթը՝ նվազագույնը 64 կբ/վ (G.711) / 16 կբ/վ (G.722.1) / 16 կբ/վ (G.726) / 32-128 կբ/վ (MP2L2), Կեդրայնությունը՝ նվազագույնը 4096 × 2160, 50Hz: 22fps (4096 × 2160), 25fps (3840 × 2160, 1920 × 1080, 1280 × 720) 60Hz: 22fps (4096 × 2160), 24fps (3840 × 2160), 30fps(1920 × 1080, 1280 × 720), BLC/3D DNR/ROI/Defog Ցանցային պահուսպը՝ NAS (Support NFS,SMB/CIFS), ANR, Ահազանգի նշան շարժի հայտնաբերման, ցանցի կորստի, IP հասցեների խափանման, հիշողության ծավալի ավարտման ժամանակ, Արարատղակարգերը (պրոպոլոնները) TCP/IP, UDP, ICMP, HTTP, HTTPS, FTP, DHCP, DNS, DDNS, RTP, RTSP, RTCP, PPPoE, NTP, UPnP, SMTP, SNMP, IGMP, 802.1X, QoS, IPv6, Bonjour; ONVIF(PROFILE S,PROFILE G),ISAPI աջակցությամբ Հաղորդակցության ինտերֆեյսը՝ նվազագույնը 1 RJ45 10M/100M/1000M Ethernet պորտ: 1 RS-485 ինտերֆեյս (- S): Նվազագույնը 1 մուտք և 1 ելք ահազանգի համար, Micro SD/SDHC/SDXC հնարավորություն, նվազագույնը 128ԳԲ ծավալով, Տեսախցիկը պետք է ունենա խելացի գործառնություններ, ինչպիսիք են գծային փրամագծի հայտնաբերում, այդ թվում վիրտուալ, ներխուժման հայտնաբերում, Տարածաշրջանի հայտնաբերում, դեմքի հայտնաբերում/ճանաչում, օբյեկտների հաշվարկի վերլուծություն և վիճակագրություն, ջերմային քարտեզի առկայություն, սցենարի փոփոխման հայտնաբերում, ծայնի հանկարծակի բարձրացման/իջեցման հայտնաբերում, Դեֆոկուս Պաշտպանվածությունը նվազագույնը IP66, IK10, Աշխարանքային ջերմաստիճանը՝ նվազագույնը -30 °C-ից 60 °C Սնուցումը՝ 24 V AC ± 10%, PoE (802.3at), հոսանքի սպառումը առավելագույնը 24W: HIKVISION DS- 2CD4685F-IZ կամ համարժեք- 1հապ: PTZ Տեսախցիկ Պարկերը՝ 1 /1.8" առաջադեմ սկան CMOS, Լուսավորությունը՝ Color: 0.002 Lux @ (F1.5, AGC ON), B/W: 0.0002 Lux @ (F1.5, AGC ON), Որսալու արագությունը՝ նվազագույնը 1/1 վ-ից 1/30000 վ, Ավտոֆոկուս՝ գիշեր/ցերեկ (ICR), WDR՝ նվազագույնը 120Դբ, HLC, 3D DNR, Defog, EIS, OIS, Թվային</p>
--	--	--	--

			<p>խոշորացումը՝ նվազագույնը 16x, Օպտիկական խոշորացումը՝ նվազագույնը 48 x, SNR՝ նվազագույնը 52 ԴԲ, օպտիկական DEFOG, Ոսպնյակը՝ 6.0-ից 288 մմ, 48 x օպտիկական, Խոշորացման արագությունը՝ առավելագույնը 5վ, Ապերյուրային անկյունը F1,5, 360° ասպիհանի պլանային հնարավորություն, Կետայնությունը՝ նվազագույնը 3840 x 2160, Main Stream 50 Hz: 25 fps (3840 x 2160, 2560 x 1440, 1920 x 1080, 1280 x 960, 1280 x 720); 60 Hz: 30 fps (3840 x 2160, 2560 x 1440, 1920 x 1080, 1280 x 960, 1280 x 720), Sub-Stream 50 Hz: 25 fps (704 x 576, 640 x 480, 352 x 288) 60 Hz: 30 fps (704 x 480, 640 x 480, 352 x 240), Third Stream 50 Hz: 25 fps (1920 x 1080, 1280 x 960, 1280 x 720, 704 x 576, 640 x 480, 352 x 288) 60 Hz: 30 fps (1920 x 1080, 1280 x 960, 1280 x 720, 704 x 480, 640 x 480, 352 x 240) Վիդեո սեղմումը՝ H.265,H.264,MJPEG, Վիդեո ք/ն՝ 32 Kbps to 16384 Kbps, Աուդիո սեղմումը՝ G.711alaw,G.711ulaw,G.722.1,G.726,MP2L2,PCM, Աուդիո ք/ն՝ 64 Kbps (G.711)/16 Kbps (G.722.1)/16 Kbps (G.726)/32 Kbps to 128 Kbps(MP2L2): Արարողակարգերը (պրոտոկոլներ) IPv4/IPv6, HTTP, HTTPS, 802.1x, Qos, FTP, SMTP, UPnP, SNMP, DNS, DDNS, NTP, RTSP, RTCP, RTP, TCP/IP, UDP, IGMP, ICMP, DHCP, PPPoE, Bonjour, Open-ended API, ONVIF, ISAPI, Hikvision SDK, Third-party management platform, Hik-Connect, ISUP, DORI գործառնություն, նվազագույնը՝ հայտնաբերում 25px/m, 4600m -դիտարկում՝ 65 px/m, 1825 m, -ճանաչում՝ 125 px/m, 920 m, -նույնականացում՝ 250պր/մ, 460մ, Աշխարանքային ջերմաստիճանը՝ -40-ից +700C, Պաշտպանվածությունը՝ նվազագույնը IP 67: HIKVISION DS-2DF8C848I5XS-AELW(T2) կամ համարժեք – 3 հար: Ստեղծաշար-Մանիպուլյատոր - վահանակը պետք է աշխարհի վիդեո կենտրոնի հետ ցանցի կամ սերիալ պորտի միջոցով, ղեկավարումը կատարվում է վահանակի վրա գրանվող կոճակների և կառավարման վահանակի միջոցով, -նվազագույնը 16 օգտվողի գրանցման թույլտվություն՝ 1 ադմին և 15 օպերատորներ, - էկրանը՝ նվազագույնը LCD, 128x64, - նվազագույնը 4 մակարադակ ղեկավարման վահանակ, - ղեկավարման ռեժիմը՝ նվազագույնը Network, RS-232, RS-422, RS-485, - նվազագույնը 1 ցանցային ինտերֆեյսը՝ նվազագույնը 10 M/100 Mbps self-adaptive Ethernet interface, - նվազագույնը 1-ակկան USB 2.0, RS-232, RS-422, RS-485, - հոսանքի սպառումը՝ 12VDC, առավելագույնը 4,5W, - աշխարանքային ջերմաստիճանը՝ -10-ից +55° C, - նվազագույն չափերը՝ 435 x 193 x 110 մմ, - քաշը՝ առավելագույնը 1 կգ: HIKVISION DS-1200KI կամ համարժեք – 1 հար: Ցանցային սլիշ - 12 Gigabit Ethernet էլեկտրական պորտեր և 12 Gigabit SFP օպտիկական պորտեր, -Պորտի տեսակը՝ Electrical ports: RJ45, Full/half duplex, MDI/MDI-X self-adaptive; Fiber optical port: SFP packaging, -Ստանդարտները՝ IEEE802.3, IEEE802.3u, IEEE802.3ab, IEEE802.3x, -Առաջնային հերթը՝ 8, -MAC հասցեների աղյուսակ՝ 16K, -Միացումը՝ 48Գբ/վ, - Փաթեթի ուղարկման գործակիցը՝ 35,7 Մպ/վ, -Ներքին քեշը՝ 12 Մբիթ, -Հոսանքը՝ 220 VAC, մինչև ≤ 30 W, - Աշխարանքային ջերմաստիճանը՝ -5 °C-ից +50 °C: HIKVISION DS-3E0524TF կամ համարժեք – 1 հար: Ցանցային սլիշ - 8 x Gigabit PoE պորտեր, 1 x Gigabit RJ45 պորտ, 1 x Gigabit SFP օպտիկական պորտ, - Պորտի տեսակը՝ RJ45 port, full duplex, MDI/MDI-X adaptive, - Ստանդարտները՝ IEEE 802.3, IEEE 802.3u, IEEE 802.3x, IEEE 802.3ab, IEEE 802.3z, -MAC հասցեների աղյուսակը՝ 4K, -Միացման արագությունը՝ 20Գբ/վ, -Փաթեթի ուղարկման գործակիցը՝ 14.88 Մպ/վ, -Ներքին քեշը՝ 1.5 Մբիթ, -POE ստանդարտ՝ IEEE 802.3af, IEEE 802.3at, - POE պորտեր՝ 1-8, -Պորտի հզորությունը՝ 30W, -POE</p>
--	--	--	--

			<p> <i>հզորությունը՝ 58W, -Առավելագույն սպառումը՝ 65W, - Աշխատանքային հզորությունը՝ -10 °C-ից 55 °C: HIKVISION DS-3E0510P-E/M կամ համարժեք – 12 հար: Ցանցային սվիչ - 6 × 100M PoE պորտեր , 2 × Hi-PoE պորտ , 1 × gigabit RJ45 պորտ and 1 × gigabit SFP օպտիկական պորտ, -Պորտի տիպը՝ RJ45 port, full duplex, MDI/MDI-X adaptive, -Սրանդարներ՝ IEEE 802.3, IEEE 802.3u, IEEE 802.3x, IEEE 802.3z and IEEE 802.3ab, - MC հասցեների աղյուսակը՝ 2K, -Միացման արագությունը՝ 5,6 Գբ/վ, -Փաթեթի ուղարկման գործակիցը՝ 4.1664 Մպ/վ, -Ներքին քեշը՝ 1.0 Մբիթ, -POE սրանդարը՝ Ports 1 and 2: IEEE 802.3af, IEEE 802.3at, IEEE 802.3bt Ports 3 to 8: IEEE 802.3af, IEEE 802.3at, -Պորտի հզորությունը՝ 30W-90W, -POE հզորությունը՝ 110W, -Առավելագույն սպառումը՝ 120W: HIKVISION DS-3T0310HP-E/HS կամ համարժեք – 16 հար: POE ընդարձակիչ -Մուտքը՝ 1 ալիք 10/100 BaseT(X) և IEEE 802.3at սրանդարները PD միացման համար, -Ելքը՝ 2 ալիք 10/100 BaseT(X) և IEEE 802.3at սրանդարները PSE ելքով, - Էլեկտրամիճակագրական սնուցումը՝ կոնտրակտային ±7 կՎտ, անլար՝ ±9 կՎտ, -Լարումը՝ ±2 κB սնուցման պորտով, ±4 κB ցանցային պորտով, -Աշխատանքը՝ մինչև 100 000 ժամ, -Սպառումը՝ մինչև 2 Վտ, -Պահպանման ջերմաստիճանը՝ -30°C—ից 70°C: HIKVISION DS-1H34-0102P կամ համարժեք – 6 հար: Մոնիտոր Չափսը՝ նվազագույնը 55", LED, կետայնությունը նվազագույնը՝ 4K Դիման անկյունը՝ 178 հորիզոնական և 178 ուղղահայաց, պատասխանի ժամանակը՝ առավելագույնը՝ 8մվ, պայծառությունը՝ նվազագույնը 400 cd/m², Կոնտրաստը՝ 1200:1, նվազագույնը 1.07 միլիարդ գույն, առնվազն մեկական HDMI 2.0, VGA, LAN, USB3.0*1 /USB2.0*1, RS232, Հոսանքի ծախսը՝ առավելագույնը 180W, քնի ռեժիմում՝ 0,5W Աշխատանքային ջերմաստիճանը՝ 0 °C ~ 40 °: HIKVISION DS-D5055UC կամ համարժեք – 4 հար Կոշտ սկավառակ 8TB /64MB(6Gb/s NCQ)/5900RPM/SATA3 -SkyHawk- ի ծրագիրը ապահովում է ակտիվ պահպանման պաշտպանություն - վերահսկողության համակարգի տվյալները կանխարգելման, միջամտության և -վերականգնման: ATA- ի միջոցով վիդեո հոսքի աջակցությունը թույլ է տալիս ձայնագրել բարձրորակ տեսանյութ առանց 64 խցիկի խափանումների: MTBF 1 միլիոն ժամ և երեք տարվա սահմանափակ ժամանակի երաշխավորում -2-ը ներառում է RAID RapidRebuild™ ծրագիրը, որի հետ ծավալի վերակառուցումները երեք անգամ ավելի արագ են քան ավանդականները -RAID համակարգեր: - Ներկառուցված ռոտացիոն թարթման փոխիների շնորհիվ ապահովում է հետևողական կատարում բազմակի համակարգերի վրա, որպեսզի հաճախորդները կարողանան հեշտությամբ միավորել իրենց համակարգերը: ST8000VX001-520 կամ համարժեք – 16 հար: Տեսախցիկի ամրացման մաս -Hikvision DS-1260ZJ տեսակի կամ համարժեք , - Պատրաստման նյութը՝ ալյումինե: DS-1260ZJ կամ համարժեք– 52 հար: Տեսախցիկի ամրացման մաս Հորիզոնական, 2ժանգոտովող երկաթից: DS-1275ZJ-SUS կամ համարժեք – 33 հար: Տեսախցիկի ամրացման մաս Պալից ամրացնելու համար, տուփով: DS-1604ZJ-box կամ համարժեք – 3 հար: Սնուցման սարք HKA-A24250-230 կամ համարժեք – 3 հար ուղեղ տեսախցիկի – 3 հար 500մմ փրամագծով սյան վրա տեղադրման համար, երկարությունը 1.5մ, բեռնունակությունը 40կգ: Ցանցային բաժանիչ – 4 հար Ցանցային փոխակերպիչ, SFP մոդուլ – 40 հար - Ցանցային SFP մոդուլ, - Մեկ էլեկտրամատակարարում 3.3V, - Փոքր ձևի գործոնի միակցիչ (SFP) MSA համատեղելի, - Կրկնակի LC միակցիչ, - Hot Pluggable ունակություն, </i> </p>
--	--	--	---

